Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armer
T + 374 10 50 09 64/61

«ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցին.

Վերապահումով Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը, քաղված են «ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 2021 թվականի հունիսի 25-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք վերապահումով աուդիտորական կարծիք:

Մեր կարծիքով կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն: Այնուհանդերձ, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները խեղաթյուրված են այնքանով, որքանով խեղաթյուրված են 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. հունիսի 25-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք վերապահումով աուդիտորական կարծիք:

Վերապահումը վերաբերում է Ընկերության կողմից իր դուստր ընկերությունները չհամախմբելուն, ինչը հակասում է ՖՀՄՍ պահանջներին: Եթե դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները համախմբվեին, ապա կից ֆինանսական հաշվետվություններում ակտիվները կնվազեին 82,382 հազար ՀՀ դրամ, պարտավորությունները կաճեին՝ 36,590 հազար ՀՀ դրամ, սեփական կապիտալը կնվազեր 118,972 հազար ՀՀ դրամ, կուտակված շահույթը կնվազեր 58,519 հազար ՀՀ դրամ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով մեր կողմից «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության պատրաստման առաջադրանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ին համապատասխան իրականացրած ընթացակարգերի վրա:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նաիրա Ուլունց
Աուդիտի ղեկավար

25 հունիսի 2021թ.